ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_8_" _փետրվարի_ 2013թ № _11 Ա_

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԽՈԶԵՐԻ ԱՖՐԻԿԱԿԱՆ ԺԱՆՏԱԽՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՍԿԻՉ ԿԵՏԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ-ի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.15կետի ժա) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման միջոցառումների ծրագիրը հաստատելու և կարանտին սահմանելու մասին» N1108-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 07.02.2013թ. թիվ ՍԿ/489-13 և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության ծառայության 04.02.2013թ. թիվ 01/10.1/151-13 գրությունների պահանջների,

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության ներթափանցման և տարածման կանխարգելման նպատակով հանձնարարել մարզի <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ կազմել անհրաժեշտ ժամանակավոր հսկիչ կետերի ստեղծման ցանկը՝ նախատեսված մարզի համայնքների ճանապարհներին և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը՝ ապահովել խոզերի

աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման միջոցառումների ծրագրով և պլանով նախատեսված գործառույթների իրականացումը

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ոստիկանության մարզային վարչությանը և <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ապահովել համապատասխան աշխատակիցներով և մասնագետներով՝ ժամանակավոր հսկիչ կետերում շուրջօրյա հերթապահություն իրականացնելու համար:
4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. փետրվարի 8
ք.Կապան

Հ ա վ ե լ վ ա ծ

ՀՀ Սյունիքի մարզպետի

2013թ. փետրվարի 8-ի

N 11-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԽՈՋԵՐԻ ԱՖՐԻԿԱԿԱՆ ԺԱՆՏԱԽՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՍԿԻՉ ԿԵՏԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Տեղ գյուղական համայնքի մայրուղու վրա:

2.ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Սյունիք գյուղական համայնքի մայրուղու վրա:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան